



# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< >> \_\_\_\_\_ 2017թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ մայրեր, սիրելի՛ կանայք և աղջիկներ.

Ջերմորեն շնորհավորում եմ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ: Անուրանալի է Ձեր դերը մեր ժողովրդի դարավոր պատմության մեջ: Հայ կանայք միշտ եղել են ազգապահպանության երաշխավորն ու մեր դարավոր ավանդույթների կրողը: Պատահական չէ, որ Սուրբ Աստվածածնի ավետման խորհրդով տոնը քրիստոնեական արմատներ ունի:

Սիրելի՛ կանայք, դուք մշտապես արժանի եք մեծարման և դրվատանքի. այս տոնը ևս լավագույն առիթ է՝ կրկին Ձեզ ցանկանալ քաջատողջություն, ընտանեկան երջանկություն, խաղաղ կյանք, մայրության բերկրանք ու երջանիկ օրեր:

Հ.ՄԻՄՈՆՅԱՆ